11.12.2019 15:00

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյանի կողմից նախաձեռնած 2020 թվականի Արթիկ
համայնքի բյուջեի նախագծի հանրային բաց քննարկման

Հանրային քննարկման նիստը սկսվեց ժամը 15:00-ին;

Ներկա էին՝

Համայնքի ղեկավար Մխիթար Վարագյանը, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արտակ Գրիգորյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Գ. Փթուկյանը, ավագանու անդամներ՝ Ռ. Վարդանյանը, Ռ. Ղուլիջողյանը, աշխատակազմի բաժնի պետեր, քաղաքացիներ, դպրոցականներ:

Ընթացք.

Նիստը վարող համայնքի ղեկավար Մխիթար Վարագյանի առաջարկով համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետի Արտակ Ռափյանը ներկայացրեց բյուջեի նախագիծն ընդհանուր գծերով և նախատեսված հիմնական ցուցանիշներով:

Այնուհետ նիստը վարողն առաջարկեց սկսել քննարկումները և հարցադրումները

Այնուհետև համայնքի բնակիչ Ա. Աղաջանյանը հարց բարձրացրեց, ասելով, որ 2020թ-ին նախատեսվում է սեփական եկամուտների աճ 10 մլն ՀՀ դրամով: 10 մլնից որոշ մասը հաստատագրված վճարներ են, մյուս մասը՝ ոչ: Նախատեսված գումարը չհավաքագրվելու դեպքում ինչ եղանակով կարելի է ապահովել ծախսային մասը:

Ա. Ռափյանը հաստատեց ռիսկկայնությունը, ավելացնելով, որ բյուջեն այնպես է պլանավորվում, որ շեղումների դեպքում դրանք չնչին լինեն: Օրինակ աղբահանության վճարների գանձման հետ համայնքապետարանը հանդիպում է այդ խնդրին: Համայնքի մոտ 20 000 բնակիչներից միայն 7 500 են աղբահանության վճարումներ անում: Եթե պլանավորվի 100% -վաճավճարների հավաքագրումը կատարալ, ապա եկամուտների հավաքագրման հետ խնդիրներ կառաջանան: Այս մասով պլանավորումը կազմակերպվում է 7 500 բնակչի համար: Սակայն համայնքապետարաը վարձավճար չմուծողներին էլ աստիճանաբար բերում

է այն գիտակցության, որ սեփական եկամուտների հավաքագրման միջոցով է կարելի միայն համայնքում իրականացնել բարեկարգման աշխատանքներ, լուսավորության ցանցի ընդլայնում և այլն:

Բնակիչ Ա. Աղաջանյանը, ներկայացված տվյալներից ելնելով, ասաց, որ եթե 7000 բնակչից գանձվում է 14 մլն աղբահանության գումար, ապա կարելի է 2020 թվականին 14 000 բնակչից գանձել 28 միլիոն ՀՀ դրամ: Նա առաջարկեց 2020 թվականը հայտարարել <<Մաքուր քաղաքի>> տարի, բնակիչներին ընդգրկել այդ շարժման մեջ, որի համար յուրաքանչյուր բնակիչ պիտի անի իր առաջին քայլը՝ վճարելով իր աղբահանությանհասանելիք վճարը:

Համայնքի ղեկավար Մ. Վարագյանը ողջունեց այս գաղափարը, հավելելով, որ աղբահանության հետ կապված խնդիրները հնարավոր է լուծել աղբի վերամշակման գործարանի ստեղծման միջոցով: Այս պահին Արթիկի տեղական իշխանությունները արտերկրյա աղբի վերամշակում իրականացնող կազմակերպություններից մեկի հետ բանակցություններ են վարում Արթիկում աղբի վերամշակման գործարան հիմնելու ուղղությամբ, որը մեծ օգուտ կբերի համայնքին և մարզին ընդհանուր առմամբ:

Արթիկի բնակիչ Տ. Չարչյանը հարց բարձրացրեց վերջին ամսում ՀՀ կառավարության կողմից ընդունված թափառող շների մասին օրենքի վերաբերյալ ինչ քայլեր է ձեռնարկում տեղական իշխանությունները, քանի որ փողոցներում թափառող կենդանիների թվի աճ է նկատվում:

Համայնքի ղեկավար Մ. Վարագյանը պատասխանեց, որ ՀՀ կառավարություն է դիմելու այս հարցով: Ո՛չ մարզում, ո՛չ էլ համայնքում շների համար կացարաններ չկան: Դրանց կառուցումը և պահպանությունը մեծ ֆինանսական ծախսեր են ենթադրում, ինչը տեղական բյուջեով հնարավոր չէ իրականացնել: Այս հարցի լուծման համար կառավարության աջակցությունն է հարկավոր:

Համայնքի բնակիչ Ա. Նահապետյանը առաջարկեց համայնքում շենքերի, պարիսպների վրա տեղադրված գովազդային բնույթ կրող թերթիկների և փողոցային վանդալիզմի դեմ պայքար սկսել: Նա առաջարկեց համայնքի տարբեր վայրերում կառուցել հայտարարությունների համար ցուցափեղկեր, իսկ աղտոտված պատերը մաքրել ջրի ուժեղ շիթ արձակող հատուկ սարքերով: Փողոցային վանդալիզմի համար նա առաջարկեց էստակադայի պատերի ձևավորումը

հանձնարարել արտստրիտով զբաղվող մասնագետներին, նրանց այս գաղափարիիրագործման համար համայնքի բյուջեից հատկացնելով գումար:

Ա. Նահապետյանը նաև առաջարկեց Արթիկի ենթակայության ՀՈԱԿ-ներին կից հիմնել աղբը վերամշակող և այն էներգիայի վերածող կայաններ, որը կտնտեսի մեծ գումարներ:

Համայնքի ղեկավար Մ. Վարագյանը հավանություն տվեց առաջարկին, սակայն մեծ ափսոսանքով նշեց, որ դրա իրականացումը մեծ ֆինանսական միջոցներ է պահանջում, իսկ համայնքի բյուջեի մեծ լարվածությունը հնարավորություն չի տալիս սեփական մջոցներով կյանքի կոչել այդ գաղափարը: Սակայն հնարավորության դեպքում աշխատանքներ պետք է տարվեն այս գաղափարը կյանքի կոչելու ուղղությամբ:

Նիստն ավարտվեց ժամը 16:00-ին:

Նիստը վարեց՝

Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան

Արձանագրեց՝
Համայնքապետարանի
քարտուղարության
բաժնի գլխավոր
մասնագետ՝ իրավաբան՝ Տաթևիկ Աղաքարյան

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

11.12.2019թ. ժամը՝ 15 ^{00}-ին

Արթիկի համայնքապետարան

Հ/Հ	Ֆիզիկական/իրավաբանական անձի անուն ազգանունը	Հեռախոսահամարը	Զբաղվածությունը	ստորագրությունը
1.	[illegible]	055-74-58-41	[illegible]	[illegible]
2.	[illegible]	077-770-775	[illegible]	[illegible]
3.	[illegible]	077-67-11-03	[illegible]	[illegible]
4.	[illegible]	094-52-08-52	[illegible]	[illegible]
5.	[illegible]	093344430	[illegible]	[illegible]
6.	[illegible]	093 44 94 00	[illegible]	[illegible]
7.	[illegible]	094 87 67 00	[illegible]	[illegible]
8.	[illegible]	077 99 69 50	[illegible]	[illegible]
9.	[illegible]	077 44 40 00	[illegible]	[illegible]
10.	[illegible]	077. 90. 72. 72.	[illegible]	[illegible]
11.	[illegible]	094. 91-50-26	[illegible]	[illegible]
12.	[illegible]	096656413	[illegible]	[illegible]
13.	[illegible]	094-82-38-67	[illegible]	[illegible]
14.	[illegible]	094 17 15 05	[illegible]	[illegible]
15.	[illegible]	094 50 84 13	[illegible]	[illegible]
16.	[illegible]	077 88 2021	[illegible]	[illegible]
17.				
18.				
19.				
20.				
21.				
22.				
23.				
24.				
25.				
26.				
27.				
28.				
29.				